

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՈՎՏԱՄԵՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016 Թ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հովտամեջ համայնքի հարգելի բնակիչներ, հյուրեր, պարոն Ա. Այվազյան, այսօր Ձեր քննարկմանն ենք ներկայացնում Հովտամեջի գյուղական համայնքի ղեկավարի, ավագանու, համայնքապետարանի աշխատակազմի 2016թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը կատարած աշխատանքները:

Համայնքապետարանը իր գործունեությունն իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Գյուղն ունի 261 տնտեսություն, 1468 բնակչություն, 913 ընտրող, 269.8 հա ընդհանուր հողատարածություն, 215 հա գյուղատնտեսական նշանակության որոգելի հողեր, որից՝ 153 հա վարելահող, 55 հա տեսմերձ հողամաս 7 հա համայնքային սեփականության հողեր: 2016թ. ընթացքում մշակվել է 212 հա, անցյալ տարվա համեմատ ավել է մշակվել 5 հա, չի մշակվել 3 հա: Չմշակելու հիմնական պատճառներն են՝ սեփականատերերը բավականաչափ միջոցներ չունեն որակյալ սերմացու ձեռք բերելու համար, հիմնախնդիր է նա գյուղմթերքի իրացումը:

Գյուղում հիմնականում մշակում են բանջարանոցային կուլտուրաներ՝ կարտոֆիլ, կաղամբ, վարունգ, լոլիկ, սմբուկ, դդմիկ, ծաղկակաղամբ, լոբի, հալսահատիկային մշակաբույսերից՝ ցորեն, գարի, եգիպտացորեն:

Ըստ բնագավառների կատարվել են՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Սահմանված կարգով կազմակերպվել են գույքահարկի և հողի հարկի գանձումները:

Գույքահարկի գանձումը տարեկան պլանով նախատեսվել է 2760,8 հազ.դրամ, փաստացի կատարվել է 2972,6 հ.դ, այսինքն 107,7%: Հողի հարկը տարեկան նախատեսված է 5995,5 հազ.դրամ փաստացի կատարվել է 3328,3 հազ. դրամ, այսինքն 55,5%: Հողի հարկի գանձման թերի կատարման հիմնական պատճառ է հանդիսացել կարկտահարությունը և բերքի իրացման խնդիր Տեղական սուրբերի մասով՝ նախատեսվել է 74,0 հազ.դրամ փաստացի կատարվել է 39,0 հազ.դրամ, այսինքն 52,7%-ով:

Վարձակալական հողերի մասով գտնվող գումար նախատեսվել է՝ 100,0 հազ.դրամ, կատարվել է 100%-ով: Պետության կողմից ստացված դոտացիան կատարվել է 100%:

Տարեկան կատարողականը՝ 92,7%:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՄ

Դովտամեջի միջնակարգ դպրոցի նախակրթարանի 1 ուսուցիչի աշխատվարձ է վճարվել 935,0 հ.դ. :

Շրջանավարտների համար կազմակերպվել է միջոցառում դպրոցը ավարտելու կապակուսյանը՝ ծախսվել է 50,0 հազ. դրամ :

Դպրոցահասակ երեխաներին տարբեր միջոցառումների մասնակցելու համար տրամադրվել են տրանսպորտային միջոցներ , որի համար ծախսվել է 142,0 հազ.դրամ:

Համայնքում սպորտի զարգացմանը նպաստելու համար կազմավորել ենք ֆուտբոլային թիմ, ձեռք ենք բերել մարզահագուստ և սպորտային պարագաներ, որի համար ծախսվել է 430,0 հազ.դրամ գումար:

Համայնքում բնակվող առաջին անգամ դպրոց հաճախող երեխաների նվերների համար տրամադրվել է 166,6 հ.դ.: Ամանորին կազմակերպվել է միջոցառում և համայնքում բնակվող 121 երեխաների նվերների համար տրամադրվել է 490,0 հ.դ.:

Համայնքի ղեկավարի որոշումով վերանորոգվել է Հովտամեջի միջնակարգ դպրոցի 4 համակարգի, որի համար ծախսվել է 290,6 հ.դ., այն փոխանցվել է համայնքապետարանի հաշվից:

2016 թվականի ընթացքում կատարվել է համայնքի մշակույթի տան տանիքի կապիտալ վերանորոգում, ճակատային մասի պատուհանների փոխարինում նորով, ներսի դռների փոխարինում նորով: Կատարվել է դանդիճի մասնակի վերանորոգում՝ ձեռք են բերվել վարագույրներ, աթոռներ:

Ինչպես նաև մշակույթի տան մեկ սենյակ կապիտալ վերանորոգվել է և տրամադրվել որպես խաղասենյակ:

ժամանակին էջմիածնի զինկոմիսարիատ ենք ներկայացրել համայնքի կցագրման ենթակա պատանիներ:

Մայիսի 9-ի կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, ծախսվել է 120,0 հազ. դրամ, իսկ Արցախյան պատերազմի 25 մասնակիցների տրվել է օգնություն 500.0 հազ.դրամ` յուրաքանչյուրին 20.0 հազ.դրամ:

Չոհված ազատամարտիկների 3 ընտանիքների տրվել է օգնություն 90.0 հազ.դրամ, յուրաքանչյուրին` 30.0 հ.դ., ծաղկեպսակներ է դրվել Հայրենական պատերազմի և Արցախյան շարժման զոհված ազատամարտիկների հուշարձանին:

Ապրիլյան բառօրյա պատերազմին մասնակցած ութ անդամներին տրվել է խրախուսանք 560,0 հ.դ. յուրաքանչյուրին` 70,0 հազար դրամ: Ինչպես նաև <<էջմիածինը մեր զինվորների կողքին է>> նախաձեռնությանը միանալու և առաջնագծի հայ մարտիկներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար տրամադրվել է համայնքապետարանի կողմից 700,0 հազար դրամ գումար, նախաձեռնությանը մասնակցել են նաև համայնքի բնակիչները գումարային և պարենային օգնություններով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Մարտի 8-ի կապակցությամբ համայնքում բնակվող 86 կանանց տրվել է նվերներ, որի համար ծախսվել է 410,0 հազ. դրամ:

Սոցիալապես անապահով 9 ընտանիքի որպես օգնություն տրվել է 550,0 հազ.դրամ:

Համայնքում նոր ծնված 14 երեխաների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 560,0 հազ.դրամ՝ յուրաքանչյուրին 40,0 հազ.դրամ: Համայնքում նոր կազմավորված 3 ընտանիք ստացել է 90,0 հազ.դրամ օգնություն, յուրաքանչյուրին 30,0 հազ. դրամ:

Համայնքի բնակիչ, 2 զինակոչիկի ԴՕՄԱԱՖ-ի դասերին մասնակցելու համար տրամադրվել է, 30,0 հազ.դրամ ճանապարհածախս, յուրաքանչյուրին՝ 15,0 հազ.դրամ:

Համայնքում հարազատը կորցրած 10 ընտանիքների տրվել է դրամական օգնություն 340,0 հազ.դրամ և ծաղկեպսակներ է դրվել մահացածների շիրիմներին:

Համայնքում բնակվող 111 թոշակառուների տրվել է դրամական օգնություն, յուրաքանչյուրին տաս հազարական դրամ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հունվարի առաջին տասնօրյակում կազմակերպվել են անասնազիխաքանակի համատարած հաշվառման աշխատանքներ և արդյունքները ներկայացվել է վիճակագրական ծառայություն: Հաշվառվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքերի հուլիսյան հաշվետվության 4 ԳՏ ձևը: Ձևավորվել է համապատասխան հանձնաժողով, որը հաշվարկել և մարզպետարան է ներկայացրել համապատասխան փաստաթուղթ, որում հաշվարկված է բնակիչների կրած վնասի չափը կարկտահարությունից:

ԿՈՍՏՐԱԿՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐԳԱՆՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գարնանը ծաքրվել է գյուղամիջյան ճանապարհի երկու կողմի առուները, կատարվել են համայնքի կենտրոնական մասի բարեկարգման աշխատանքներ և աղբահանություն, որի համար ծախսվել է 150,0 հազ.դրամ գումար:

Համայնքի Տերյան փողոցում կատարվել են փոսալցման աշխատանքներ, որի համար ծախսվել է 316,0 հազար դրամ գումար:

Համայնքի կենտրոնական փողոցի լուսավորության վերանորոգման համար ծախսվել է շուրջ 235,0 հազ. դրամ գումար:

Համայնքապետարանի շենքի հատակի լամինացատման համար ծախսվել է 290,0 հազ.դրամ գումար:

Համայնքում կատարվում է աղբահանություն շաբաթը մեկ անգամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՐԱՏԱՊ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Համայնքի խմելու ջրագծի փոխարինում նորով:
2. Համայնքի էլեկտրական մալուխների և հենասյուների փոխարինում նորով:



Ա. ՍԱՐԳՍՅԱՆ